



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

06 ՄԱՅԻՍ 2019 ԹՎԱԿԱՆ N19-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով.

Արուճ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արուճ համայնքի ավագանու 2019 թվականի մայիսի 6-ի արտահերթ նիստի օրակարգը:

1. ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ուղղված սուբվենցիա ստանալու և ՀՀ Արագածոտնի մարզի «Արուճ համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտետոնե ծածկույթի հիմնանորոգում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին:

2. Արուճ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. Մարտին Այվազյան *MA*

2. Երվանդ Մանուկյան *EM*

3. Տիգրան Ավետիսյան *TA*

4. Կորյուն Հովհաննիսյան *KH*

5. Գեղամ Կարապետյան *GA*

Արուճ համայնքի ղեկավար



Բ. Մարտիրոսյան



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի  
Արուճ համայնք, էլ. փոստարuch.aragatsotn@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 ՄԱՅԻՍ 2019 ԹՎԱԿԱՆ N 20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՏԱԼՈՒՄԱՍԻՆ՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով հաստատված կարգերի դրույթներով՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնելի համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Արուճ համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգում» (այսուհետ՝ ծրագիր) սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել որ՝

1) Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Արագածոտնի մարզպետարան ներկայացնել տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրի ֆինանսավորման հայտը:

2) Ծրագրի ներկայացման համար համայնքի 2019 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

3) Ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Արուճ համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5

դեմ - 0

ձեռնպահ - 0

- |   |                      |                    |      |
|---|----------------------|--------------------|------|
| 1 | Մարտին Այվազյան      | <i>[Signature]</i> | Կողմ |
| 2 | Տիգրան Ավետիսյան     | <i>[Signature]</i> | Կողմ |
| 3 | Գեղամ Կարապետյան     | <i>[Signature]</i> | Կողմ |
| 4 | Կորյուն Հովհաննիսյան | <i>[Signature]</i> | Կողմ |
| 5 | Երվանդ Մանուկյան     | <i>[Signature]</i> | Կողմ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԲԱՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

06 ՄԱՅԻՍ 2019 ԹՎԱԿԱՆ N21-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ:

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-հոդվածի 1-ին մասով.

Արուճ համայնքի ավագանին որոշեց՝

Արուճ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ ներհամայնքային փողոցների ասֆալտբետոնե ծածկույթի հիմնանորոգման համար:

Կառավարման ապարատի 900442112190 նախահաշվի 5113 հոդվածից՝ 2000,0 հազար դրամ, 5122 հոդվածից՝ 1000,0 հազար դրամ: 900442112125 նախահաշվի 5122 հոդվածից՝ 1000,0 հազար դրամ: 900442112059 նախահաշվի 5113 հոդվածից՝ 1000,0 հազար դրամ, 5122 հոդվածից՝ 1000,0 հազար դրամ տեղափոխել 900442112141 նախահաշվի 5113 հոդվածին:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. Մարտին Այվազյան *ԱԻՎ*

2. Երվանդ Մանուկյան *ՄԵՄ*

3. Տիգրան Ավետիսյան *ՏԻԳ*

4. Կորյուն Հովհաննիսյան *ԿՈՐ*

5. Գեղամ Կարապետյան *ԳԵԳ*

Արուճ համայնքի ղեկավար



Բ. Մարտիրոսյան